

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2011 թվականի N 684-Ն

ՏԵՍԱԶԱՅՆԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ (ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ) ԱՐԺԵՔԸ (ԳԻՆԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա տեսաձայնային մագնիսական կրիչների դրոշմավորման համար անհրաժեշտ՝ 2011 թվականի ընթացքում ձեռք բերվող հսկիչ նշանների (դրոշմապիտակների)՝

1) արժեքը (գինը) որոշել հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) պատրաստող կապալառու կազմակերպության ընտրության նպատակով հայտարարվող մրցույթի արդյունքում՝ ելնելով նվազագույն գնի նախապատվության սկզբունքից (այլ հավասար պայմաններում).

2) առավելագույն արժեքը (գինը) սահմանել 25 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2011 թ. մայիսի 27
Երևան